№ 13. Կիրակի, յունիսի 5—1866. № 13.

# ՎԱՃԱՌԱԿԱՆ

Թիֆլիսի առեւտրական գազեթ:

Հրատարակւում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 ամսւայ գինը Մարտից մինչեւ Յանւարը փողովքումն՝ 2 ման. 50 կոպ., դուրսը՝ 3 մանէթ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ

(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

Գազեթին ստորագրւել կարելի է խմբագրողի մօտ:
Գազեթումը հրատարակւելու կընդունւին մասնաւոր յայտարարութիւններ: Գների մասին կարելի է իմանալ խմբագրատանը:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ:

Խմբագրատանից: Տէրութենի կարգադրութիւնները: Պարգեւներ: Տորգեր: Դատաստանական: Բարձրագոյն ռեսկրիպտ: Թէ ինչ է վեկիլը: Թիֆլիսի դատաստանը շինական կառավարութիւններ սարքելու մասին: Զանազան տեղեկութիւններ: Առեւտրական տեղեկութիւններ:

## ԽՄԲԱԳՐԱՏԱՆԻՑ:

«Վաճառականի» գազեթի խմբագրութիւնը յայտնում է, որ դեռ էլի շարունակւում է էս գազեթին ստորագրւելը եւ բոլոր նոր ստորագրվողները կստանան գազեթը 1 №-ից սկսած:

Երբ որ կէտանկին «Վաճառականի» սակաւաթիւ մնացած 1-ն նումերները, կյայտնենք մեր առաջայ ստորագրվողներին տեղեկանալու:

## ՏԷՐՈՒԹԵՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

### ՊԱՐԳԵՒՆԵՐ:

Թագաւոր Կայսրն էս տարի, ապրիլի 3-ին միւսների եւ էս հետեւեալ հայերին «խեղդվողների ազատելու համար» մակագրով մեդալներ է շնորհել՝ ՈՍԿԷ ՄԵԴԱԼՆԵՐ—1.) Աւագ քահանայի որդի Կոստանդին ՏԷՐ-ՍՏԵՓԱՆԵԱՆՑԻՆ, 2.) Գորու բնակիչ Յակոբ ԽԻԹԱՐԵԱՆՑԻՆ, 3.) Թիֆլիսի բնակիչ Իվան ՅԱԿՈԲԵԱՆՑԻՆ:

ԱՐԾԱԹԷ ՄԵԴԱԼՆԵՐ—1.) Թէլաւի Նահանգի քահանայ Մելքիսեդէկ ՏԷՐ-ԲԱՐՍԵՂԵԱՆՑԻՆ, 2.) Դուշեթի բնակիչ Թաթուլ ԹԱԹՈՒԼԵԱՆՑԻՆ, 3.) Սղնախի բնակիչ Իվան ՄԻՐԱՔԵԱՆՑԻՆ, 4.) Ախալցխայի բնակիչ Կարապետ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՑԻՆ եւ 5.) Վլադիկավկազի բնակիչ Յովսէփ ԱՋԻՋԵԱՆՑԻՆ:

## ՏՈՐԳԵՐ:

Ճանապարհների 8-դ օկրուգումը յունիսի 23-ին նշանակած է 1.) Քութայիսի եւ Օրպիրի շոսէի վրայ 36 վերստ եւ 9 1/4 սաժէն քարերու, վերստին 8 խորանարդեան (կուբիչեսկի) սաժէն ջարդած քարեր (շչեբէն) հասցնելու, 2.) Դուշեթի եւ Անանուրի շոսէի վրայ 26 վերստ եւ 73 շաժէն, վերստին 6 խորանարդեան սաժէն ջարդած քարեր հասցնելու եւ 3.) Պրիշիբսկի ստանցիից մինչեւ Պրոխլադնոյ ստանցիէն 9 վերստ եւ 402 1/5 սաժէն քարերու, վերստին 6 խորանարդեան սաժէն ջարդած քարեր հասցնելու տորգը:

Թիֆլիսի վինւորական հիւանդանոցի կանտորումը յունիսի 9-ին նշանակած է հիւանդանոցին պատկանած փէշտեղէնների, երկաթեղէնների եւ չուգունեղէնների ներկելու տորգը:

Կուտրայրած Թիֆլիսի քաղաքացի Սոլոմոն Խարազեանցի գործերի համար սարքած կոնկուրսի կառավարութիւնը, յայտնում է, որ պէտք է ծախվի Սոլոմոն Խարազեանցի Թիֆլիսի 2-դ մասումը եւ 2-դ կվարտալումը գտնված տունը: Ցանկացողները կարող են տեսնվիլ Գեներալ—Մայոր Գաբրիէլ Ղորղանեանցի եւ կամ պատուաւոր քաղաքացի Զաքարիա Սարաջեանցի եւ Գէորգ Փրիդոնեանցի հետ:

## ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ:

Մայիսի 19-ին Պետերբուրգի սենատումը ուրիշ գործերի հետ նշանակված էին քննելու եւ մեր Կովկասին վերաբերեալ էս հետեւեալ գործերը:

4-դ Դեպարտամենտումը: 1.) Իշխան Գուրամովի տանիճանաւոր Սուրգունեանցի հետ ունեցած գործը վնասների մասին:

Մեժեվոյ Դեպարտամենտումը: 1.) Երկայնաբազուկ—Արղութեանց իշխանների Ջամբակուրեան Օրբելեանի իշխանների հետ ունեցած գործը կալուածքի մասին: 2.) Երեւանի բնակիչ Մնացականեանցի մրգեղենների այգու ծախելու գործը, 3.) Երեւանի բնակիչ Աւագեանցի մահից յետոյ մնացած տան ծախելու գործը:

## ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՌԵՍԿՐԻՊՏ,

Որ տրւած է մինիստրների նախագահ, դեյստվիտելնի տայնի սովետնիկ իշխան Գագարինին:

Իշխան Պաւել Պավլովիչ: Աստուծու նախախնամութենով իմ կառավարութենին յանձնած ժողովրդի դէպի ինձ յայտնած միասիրտ հաւատարիմ հպատակութենի զգացմունքները, ինձ համար ամենալաւ պարգեւն է իմ աշխատանքների փոխարէն, որ անում եմ ես Ռուսաստանի բարօրութենի համար:

Որքան էլ մխիթարական է ինձ համար էս բանը, էնքան աւելի պարտաւոր եմ համարում ինձ պահպանել Ռուսաց ժողովուրդը էն վնասակար սուտ ուսումների սկզբունքներից, որոնք ժամանակով կարող էին խախտել հասարակական բարեկարգութիւնը, եթէ նրանց աճելուն արգելքներ չդնվէին:

Էն անցքը, որ Ռուսաստանի ամեն ծէրերից բերեց դէպի ինձ ուղղված հաւատարիմ հպատակութենի զգացմունքները, մի եւ նոյն ժամանակը պատճառ դառաւ աւելի պարզ յայտնելու էն ճանապարհները, որոնցով մտցնվում էին եւ տարածվում էին էդ վնասակար սուտ ուսումները: Իմ հրամանով սարքած առանձին կոմիսիայի արած հետա-

ղոտութիւնները արդէն ցոյց են տալիս չարի
արմատը ։ Այդպիսով Նախախնամութիւնը
կամեցաւ բաց անել Ռուսաստանի աչքերի
առաջ թէ ինչ հետևանքներ պէտք է սպասել
նրանց ընթացքից և մտածմունքներից, որոնք
լրբաբար յարձակվում են բոլոր բաների վը-
րայ, որ վաղուց սուրբ են համարված Ռու-
սաստանի համար՝ դաւանութեան վրայ, ըն-
տանեկան կեանքի հիմքերի վրայ, օրէնք-
ներին հնազանդվելու վրայ և կարգած կա-
ռավարողներին յարգելու վրայ։

Իմ ուշադրութիւնը արդէն դարձրած է
երեխաների կրթութեան վրայ։ Ես ցոյց եմ
տվել, որ կրթութիւնը լինի հիմնված կրօնի
ճշմարտութեան, ունեցածի իրաւունքների և
հասարակական կարգ ու կանոնի հիմնական
սկզբունքների պահպանելու վրայ, Նմանա-
պէս որ ամեն տեսակ ուսումնարանների մէ-
ջը չթոյլ տվվին էն կործանող մտքերի թէ
յայտնի և թէ ծածուկ քարոզութիւնը, որով-
հետև էն մտքերը միակերպ ընդդէմ են ժո-
ղովրդի բարօրութեան բարոյական և նիւ-
թական բոլոր պայմաններին ։ Բայց էն
ուսումը, որ կհամապատասխանէր երեխա-
ների ճշմարիտ կարիքներին, չէր տալ բո-
լոր սպասած օգուտը, եթէ մասնաւոր ըն-
տանեկան կեանքումը տարածվում լի-
նի էնպիսի ուսում, որն որ ընդդէմ է քը-
րիստոնէական բարեպաշտութեանն և հա-
տարիմ հպատակութեան պարտականութիւն-
ներին։ Էս պատճառով ես հաստատ յոյս ու-
նիմ, որ էս հարկաւոր գործի մասին իմ դի-
տաւորութիւններին մեծ կարեկցութիւն կը
ցոյց տան տանու կրթողները։

Տէրութեան ճշմարիտ օգտի և իմ հպա-
տակների իւրաքանչիւրի համար պակաս հար-
կաւորութիւն չունէ և ունեցածի իրաւունք-
ների կատարեալ ապահովութիւնը, որոնք իր
բոլոր բաժանմունքներով սահմանված է ընդ-
հանուր կանոններով և 1861 թւի փետրվա-
րի 19-ի կանոնադրութենով։ Բաց ի էն, որ
էս իրաւունքը օրինաւոր է և բոլոր բարե-
կարգած քաղաքական հասարակութիւնների
արմատական հիմքերից մէկն է, անբաժա-
նելի կապ ունէ մասնաւոր և ազգային հա-
րստութեան զարգացման հետ։ Էդուր մասին
կասկածել կարող են միայն հասարակական
կարգ ու կանոնի թշնամիները։

Էս սկզբունքների հաստատելու և պահ-
պանելու համար պէտք է հետևեն բոլոր էն
անձները, որոնք ունեն իրաւունքներ և թագա-
ւորական ծառայութեան մէջ պաշտօններ են
վարում։ Կանոնաւոր թագաւորական կառա-
վարութեանումը ինձ և հայրենիքին բոլոր ծա-
ռայողների առաջին պարտքն է իրանց պար-
տաւորութիւնների խղճապէս և քաջ կատա-
րելը, առանց խոտորվելու տէրութեան դի-
տաւորութեանից։ Ինչպէս իրաւունքի չարա-
չար գործ ածելը, նմանապէս և անգործ թող-
նելը միատեսակ վնասակար են։ Միայն էս
պարտաւորութիւնների անխոտոր կատարե-
լով կարելի է ապահովացնել կառավարու-
թեան գործողութիւնների էն միութիւնը, որ
հարկաւոր է նրա դիտաւորութիւնների կա-
տարվելու և նրա նպատակներին հասնելու
համար։

Ինձ յայտնի է, որ թագաւորական ծա-
ռայութեանումը գտնվածներից մէկ քանիսը
մասնակից էին սուտ համբաւների և տէրու-
թեան գործողութիւնների կամ դիտաւորու-
թիւնների և մինչև անգամ հասարակական
կարգի ընդդէմ էն ուսումների տարածելուն,
որոնց աճելը չպէտք է թոյլ տվվի։ Ծառա-
յողների կոչումը նրանց խօսքին աւելի ար-
ժանաւորութիւն է տալիս և էդուրով կա-
րողանում են ծռմռել կառավարութեան դի-
տաւորութիւնները ։ Էդպիսի անկարգու-
թիւնները չի կարելի թողնել։ Բոլոր գլխա-
ւոր կառավարողները պէտք է մտիկ տան
իրանց ձեռի տակին էլածների արարմունք-
ներին և պահանջեն նրանցից, որ նրանք
ուղիղ, ճիշդ և անդադար կատարեն ի-
րանց պարտականութիւնները. առանց էդ
բանի անկարելի է, որ կանոնաւոր առաջա-
նան դատաստանատների գործերը։ Իրանք
էլ իրանց կողմից օրինակ պէտք է դառնան
իշխանութիւնների պատիւը պահելումը։

Վերջապէս էն միջոցների կատարեալ յաջո-
ղվելու համար, որ գործ են դնվելու հասարա-
կութեան մէջը զարգացած վնասակար ուսում-
ների դէմ և որոնք աշխատում են քանդել
հասարակութեանումը կրօնի, բարոյականու-
թեան և հասարակական կարգի արմատա-
կան հիմքերը, կառավարութեան բոլոր մասերի
գլխաւորները պէտք է օգնեն միւս էն առող-
ջամիտ, ապահովացնող և յուսալի ուժերին ,
որոնցով Ռուսաստանը միշտ առատ է էլել
և մինչև հիմի էլ, Աստուծու ողորմութեամբ,
լիքն է։ Էդ ուժերը պարունակվում է բոլոր էն
կարգի մարդկանց մէջ, որոնց համար թանկ են
ունեցածի իրաւունքները , կանոնով ապահո-
վացրած և պատսպարած կալուածատիրութե-
նի իրաւունքները, կանոնի վրայ հիմնված հա-
սարակական կարգի և ապահովութեան հիմքե-
րը, տէրութեան միութեան և հաստատ բարե-
կարգութիւնների սկզբունքները, բարոյակա-
նութեան սկզբմունքները և կրօնի սրբացած
ճշմարտութիւնները։ Պէտք է օգուտ քաղել
էդ ուժերից և ունենալ աչքի առաջ նրանց
երևելի յատկութիւնները թագաւորական
ծառայութեանումը պաշտօնաւոր մարդիկ նը-
շանակելիս։ Էդպիսով բոլոր կարգի ժողո-
վուրդների համար կապահովվի չարանպատակ
բամբասանքներից հարկաւոր հաւատարմու-
թիւնը դէպի կառավարութեան գլխաւորները։
Էս դիտաւորութեամբ, իմ մշտական ցանկու-
թիւնների և անդադար յայտնած կամքիս հա-
մեմատ պէտք է կառավարութեան բոլոր մա-
սերումը կատարեալ ուշադրութիւն դարձնել
ունեցածի իրաւունքների պահպանելուն և
էն միջնորդութիւններին, որոնք վերաբեր-
վում են զանազան տեղերի օգուտներին և կա-
րիքներին և բնակիչների զանազան մասերին։
Պէտք է վերջ տալ ժողովրդի զանազան կար-
գերի մէջ թշնամութիւն գցելու կրկնվող փոր-
ձերին և մանաւանդ էն փորձերին, որ ան-
վել են թշնամութիւն գրգռելու աղնուա-
կանների և առհասարակ կալուածատէրների
դէմ, որոնցը հասարակական կարգի թշնա-
միները կարծում են ուղղակի իրանց թշնա-
մի։ Էս ընդհանուր սկզբունքների հաստատ
և անդադար հետևելով սահման կդնվի էն
յանցաւոր դիտաւորութիւններին, որ հիմի
բաւական պարզ երևեցան և պէտք է են-
թարկվեն կանոնի իրաւացի պատժին։ Ցանկա-
նում եմ ձեզ էս իմ ռեսկրիպտը յայտնել բո-
լոր մինիստրներին և առանձին մասերի գըլ-
խաւոր կառավարիչներին, պարտ ու պատ-
շաճ ձեռնարկութեան համար։

Մնում եմ դէպ ի ձեզ միշտ բարեհաճ։

Իսկականի վրայ Նորին Կայսերական Մեծութեան սեփական
ձեռքովը գրված է՝ «ԱԼԵՔՍԱՆԴՐ»։

Ցարսկի Սելոյումը
1866 թւի մայիսի 13-ին։

---

## ԹԻՖԼԻՍ

յունիսի 4-1866.

Ոսկին ու արծաթը տէրութիւնների ձեռով
կտրվելուց յետոյ ստանում են հասարակա-
կան վէկսիլի (մուրհակագրի) նշանակութիւն,
որ առանց արգելքի ամեն տեղ էլ անց է կե-
նում թէ առնելիս և թէ ծախելիս։ Ուրեմն
եթէ ամեն ապրանքներին հասարակութիւնը
տայ էնպիսի մէկ վէկսիլի նշանակութիւն,
էն ժամանակը փողի այժմեան նշանակու-
թիւնը կկորչէր, ու ոսկէ և արծաթէ փողն
էլ կդառնար մէկ հասարակ ապրանք։ Ամեն-
քին ի հարկէ յայտնի է մասնաւոր առևտրա-
կան վէկսիլների կամ բարաթների գործա-
ծութիւնը, որ մէկ տեղից տալիս են միւս տե-
ղի վրայ։ Էդ վէկսիլների վրայ նշանակվում
է՝ տարին, ամիսը, թիւը, յետոյ՝ տալու գու-

տուպանքի տակը դցել, ծեծել տալ և բռնել տալ: Շատ տեղ ու շատ անգամ, երբ նոր սկսվել է էսպիսի գործ, որ հիմի մեղանում նոր սկսվում է, դատաւորները և տանուտէրները պատահել է դէպ ի չարն են գործ դրել իրանց իրաւունքները: Աւելի լաւ կլինի, որ դրանք պատիժներին դիմելուց առաջ աշխատեն ուղղել յանցաւորի պակասութիւնները, խրատեն, համոզեն, որ վատ է նրա արարմունքը: Թող լաւ մտածեն մեր գիւղերի տանուտէրները և դատաւորները և աշխատեն իրանց գործի օրինաւոր վարելով և բարի խղճմտանքով յայտնել իրանց շնորհակալութիւնը էն իշխանութեանը, որից ընտացել են դրանք էդ իրաւունքը, ժողովուրդը բարգաւորացնելու համար:

---

## ԶԱՆԱԶԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

**Փոթու երկաթէ ճանապարհը:** Էս տարի մարտից սկսած փոթու ճանապարհի վրայ 6000 զինուորական է բանում: Աշխատում են վրայ հասցնել շուտով փոթից մինչև Օրպիրին, որի երկարութիւնը 37 վերստ է: Ասում են, որ մինչև էս յունիսի 15-ը արդէն բոլորովին զրսած կլինի փոթից մինչև Օրպիրին:

**Կ. Պօլսի հայերի կատարած հանդէսը Ռուսաց Կայսր Աղէքսանդր Զ-դի համար:** Ապրիլի 24-ին Կ. Պօլսի հայերն իրանց պատրիարքով և բոլոր հոգևորականներով ժողովվեցան Պերա Թաղումը գտնված Սուրբ Երրորդութեան եկեղեցումը: Էդտեղ Ռուսաց Թագաւորի Ապրիլի 4 վտանգիցն ազատվելու պատճառով հայոց պատրիարքը պատարագ արաւ և մաղթեց կատարեց Թագաւորի կեանքի համար: Եկեղեցումը գտնվում էին անթիւ ժողովրդի հետ և երևելի մարդիկ, որոնցից յիշում ենք՝ Ռուսաց դեսպան, գեներալ ադիւտանտ Իգնատիևին և յունաց պատրիարքին:

**Երևանի բնակիչների ընծայաբերութիւնը:** Երևանի բնակիչները Թագաւոր Կայսր Աղէքսանդրի հրաշալի կերպով ապրիլի 4 ազատվելու յիշատակի համար 3000 մ. փող են ժողովել, որ՝ շահով մէկ խեղճ աղջիկ պէտք է սովորի Երևանի աղջկանց ուսումնարաններից մէկումը:

**Ամերիկայի միացած նահանգների ազգային պարտքը:** Ճիշդ տեղեկութիւն կայ ստացած, որ էս տարի մայիսի 1-ին Ամերիկայի միացած նահանգների պարտքը հասնում է 2,827,000,000 դոլլարին:

**Ռուսաստանի երկաթէ ճանապարհները:** Հիմի Ռուսաստանումը արդէն պատրաստ երկաթէ ճանապարհների երկարութիւնը 3,638 վերստ է: Ահա պատրաստ ճանապարհների ուղղութիւնը՝

1.) Պետերբուրգից Վարշաւա 1,049 վերստ,
2.) Պետերբուրգից Մոսկով . 604 վերստ
3.) Մոսկովից Նիժնի-Նովգորոդ . 410—
4.) Վարշավից Վենա. , . . . 325—
5.) Օդեսայից Բալտա . . . . . 248—
6.) Րիգայից Դվինաբուրգ . . . . 204—
7.) Մոսկովից Րեազան . . . . 180—
8.) Վարշավից դէպ ի Պրուսիայի սահմանը 161—
9.) Հելսինգֆորսից Տավաստգուս . 102—
10.) Վարշավից Բրոմբերգ . . . 82—
11.) Վոլգայից Դոն գետը. . . . 73—
12.) Մոսկովից Եարոսլաւ . . . 66—
13.) Գրուշեվից Աքսայ . . . . 58—
14.) Պետերգոֆից Օրիէնբաում . . 51—
15.) Պետերբուրգից Ցարսկոյէ Սէլօ. 25—

Շինվում են էլի հետևեալ երկաթէ ճանապարհները, սրանց երկարութիւնը պէտք է հասնի—3,190 վերստին:

Ահա շինվող երկաթէ ճանապարհների ուղղութիւնը՝

1,) Մոսկովից Սերպուխով . . 90 վերստ
2.) Սերպուխովից Օրէօլ . . . . 272—
3.) Օրէօլից Կուրսկ . . . . . 144—
4.) Խարկովից-Կրեմենչուգ և Բալտա 550—
5.) Րեազինից Կոզլով . . . . . 180—
6.) Վիտեբսկից Դվինաբուրգ . . . 244—
8.) Կովկասեան երկրները . . . . 750—
9.) Վարշավից Տիրասպոլ. . . . 180—

---

## ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Լօնդոն մայիսի 18.

Կռւսրութիւնները օրէցօր շատանում են, Պարիժումը երևելի իտալիացւոց բանկիրները Ջիակօմօ Միկօ և Վիկտօր Րիշարը ու ընկ. կոտրացան:

Քաղաքական լուրերի պատճառով Միւնխենում (Գերմանիայում) կոտրացան խաչակ Լէվին բանկիրի ժառանգները մեծ գումարով: Համբուրգումը նմանապէս մեծ գումարով կոտրացաւ Գերց անունով բանկիրը:

Վենետիկում նմանապէս կողպեց իր առևտրական տունը Ֆէյտը: Կոտրացան նմանապէս շատ անոր Լիվերպուլումը, Մանչեստրումը և Լօնդոնումը:

Էս օրերումը սպասում են և կարծում են որ Անգլիայի բանկը իր դիսկօնտը մինչև 12 % պէտք է բարձրացնէ:

Պետերբուրգ մայիսի 10.

Լօնդոնի վրայ երեք ամսով $26^{5}/_{8}$ պէնս:
Պարիժի վրայ. . 273 սանտիմ:
5 % Լոտարեայով առաջին փոխառութեան տոմսակները . . . 111 ման.
Երկրորդ փոխառութեանը $105^{1}/_{2}$ ման.
Ոսկին . . . . . 7 մ. 55 կ.

Թիֆլիս 1866 յունիսի 4.

Բամբակի առուտուր չկայ:

Բուրդը Թուշինը 5 մանէթից մինչև 7 մ. 50 կ. և 7 մ. 80 կ. տեսակներին նայելով՝

Լեղակը . . . . . . —
Ինգլիզու շաքարը . 10 մ. 50 կ.
Ոսինը . . . . . . —
Արծաթը 72 պրօբի . . . 63 մ.
— —84 պրօբի . . . 280 մ.
Ոսկին . . . . . 7 մ. 15 կ.

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

Էս օրերումը դուրս եկաւ Էնֆիաճեանցի և ընկ. տպարանից Պ. Սունդուկեանցի շարադրած «ԳԻՇԵՐՎԱՆ ՍԱԲՐԸ ԽԷՐ Է» անունով վօդեվիլը: Գինն է 20 կոպ:

Էդ տպարանը մտադիր է տպել և ուրիշ վօդեվիլներ և կոմեդիաներ, որ դրվեցան Թիֆլիսումը էս վերջին տարիները թէատրումը խաղալու համար:

---

Դուրս եկաւ նմանապէս էս տարվայ «Գարունի» 3-դ №-ը և «Հայկական Աշխարհի» 1 և 2 № №-ը մէկ տետրակով: Շատ ցաւում ենք հրաւիրել մեր ընթերցողներին՝ դրանց ներին արժանի ուշադրութեամբ կարդալ «Գարունի» էդ №-ի 185, 186, 187 և 188 երեսները, նմանապէս «Հայկական աշխարհի» 49, 50, 51, 53 և 54 երեսները, որ վերաբերվում են մեր Վաճառականին: Ասում ենք և կըրկնում ենք ուշադրութեամբ կարդալ, որովհետև թէպէտ «Հայկական աշխարհ» փոխված «Կռունկի» վերջին №-ի համար էլ ասացինք իր ժամանակին կարդալ ուշադրութեամբ, բայց ինչպէս լսում ենք շատերից բաց են թողել էդ յօդուածները միայն մակագրին մաքի տալով:

Ի՞նչպէս մեկնել այս սառնութիւն դէպ ի «Հայկական աշխարհ»: Բաժանորդագրվել և չկարդալ աւելի անհամակրութեան նշաններ են, քան թէ Շուշի քաղաքի յետ մնալը «Հայկական աշխարհին» համակրութեան նշաններ ցոյց տալու, մինչդեռ դա ամեն կողմից ստանում է այդ նշաններ:

(Տես «Հայկական աշխարհի» 63 երեսի սկզբի 5 տողը):

---

ДОЗВОЛЕНО ЦЕНЗУРОЮ
Іюня 5-го 1866 г.

Հ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ. ՏՊԱՐԱՆՈՒՄԸ:

Խմբագրող եւ հրատարակիչ
Գ. Տէր Աղէքսանդրեանց: